Հաստատված է

Ֆիզիկական կուլտուրայի հայկական
պետական ինստիտուտի
Արհեստակցական կազմակերպության
հիմնադիր ժողով կողմից
25 դեկտեմբերի 2001 թ.
նախագահ

Գրանցված է

Պետական ռեգիստրի կողմից 14.01.02թ
գրանցման համարը-211.190.00453
Պետական գրանցման վկայականի
համարը-03 Ա 053213
ՀՀ արդարադատության
նախարարի տեղակալ, պետական
ռեգիստրի ղեկավար

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2001 թ.

ԳԼՈՒԽ 1

Ընդհանուր դրույթներ

Հոդված 1

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի արհեստակցական կազմակերպությունը (այսուհետ Արհեստակցական կազմակերպություն) Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի վարձու աշխատողների հասարակական միավորում է, որը ստեղծվում է նրանց ընդհանուր շահերը արտահայտելու և պաշտպանելու համար:

Հոդված 2

Արհեստակցական կազմակերպությունը իր գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության օրենսդրության, «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն կանոնադրության պահանջներին համապատասխան:

Արհեստակցական կազմակերպությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի տնօրինության (այսուհետ՝ Գործատու), արհեստակցական այլ միությունների հետ իր հարաբերությունները կառուցում է պայմանագրային սկզբունքով, հավասարության և փոխադարձ հարգանքի հիման վրա:

Հոդված 3

Արհեստակցական կազմակերպությունը ինքնուրույն է որոշում իր կառուցվածքը, ընտրում ղեկավար և վերստուգող մարմիններ, հրավիրում ժողովներ, համաժողովներ, ղեկավար մարմինների նիստեր:

Հոդված 4

Արհեստակցական կազմակերպության և նրա ղեկավար մարմնի գտնվելու վայրն է. *Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ալեք Մանուկյան 11, հեռ. 552501*

Հոդված 5

Արհեստակցական կազմակերպության անվանումն է՝ *Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի արհեստակցական կազմակերպություն*

ԳԼՈՒԽ 2

Արհեստակցական կազմակերպության նպատակները և խնդիրները, գործունեության առարկան և սկզբունքները

Հոդված 6

Արհեստակցական կազմակերպությունը ներկայացնում և պաշտպանում է իր մասնակիցների (անդամների) աշխատանքային, մասնագիտական, սոցիալ-տնտեսական իրավունքներն ու շահերը գործատուի մոտ, համախմբում է նրանց ջանքերը հանուն աշխատանքային, սոցիալ-տնտեսական երաշխիքների պահպանման ու ամրապնդման:

Հոդված 7

Արհեստակցական կազմակերպությունը իր գործունեությունը իրականացնում է օրինականության, կամավորության, իրավահավասարության, համերաշխության, ժողովրդավարության, ինքնակառավարման, հրապարակայնության սկզբունքներով:

Հոդված 8

Արհեստակցական կազմակերպության խնդիրներն են.

1. Համակարգել, համախմբել և գործատուին ներկայացնել Արհեստակցական կազմակերպության մասնակիցների (անդամների) աշխատանքային, մասնագիտական, սոցիալ-տնտեսական իրավունքներին ու շահերին առնչվող պահանջները:

2. Կնքել կոլեկտիվ պայմանագիր Գործատուի հետ՝ հանուն վարձու աշխատողների աշխատանքային, սոցիալ-տնտեսական երաշխիքների պահպանման և ամրապնդման:

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան վերահսկել գործատուի կողմից աշխատանքային օրենսդրության և աշխատանքի պաշտպանության կանոնների պահպանումը:

4. Ապահովել արդյունավետ համագործակցություն արհեստակցական միությունների հետ, իր ղեկավար մարմինների որոշմամբ մասնակցել ֆիզկուլտուրայի, սպորտի և տուրիզմի ոլորտի վարձու աշխատողների աշխատանքային, մասնագիտական, սոցիալ-տնտեսական, իրավական շահերը շոշափող Հայաստանի Հանրապետության օրենքների, օրենսդրական ակտերի, մասնավորապես ոլորտին վերաբերող պետական ծրագրերի փորձաքննության աշխատանքներին, այլ միջոցառումների:

5. Նպատակամղել Արհեստակցական կազմակերպության միջոցները Արհեստակցական կազմակերպության մասնակիցների (անդամների) առողջարանային բուժման և հանգստի, մարզական և այլ միջոցառումների կազմակերպման համար:

ԳԼՈՒԽ 3

Արհեստակցական կազմակերպությանը մասնակցելը (անդամակցելը) , Արհեստակցական կազմակերպության մասնակիցների (անդամների) իրավունքներն ու պարտականությունները

Հոդված 9

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Արհեստակցական կազմակերպության մասնակից (անդամ) կարող է լինել Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի յուրաքանչյուր վարձու աշխատող, ով ընդունում է սույն կանոնադրությունը, ճանաչում և իրականացնում է նրա պահանջները, սույն կանոնադրությամբ սահմանված չափով և ժամկետում մուծում է անդամավճարը:

Հոդված 10

Արհեստակցական կազմակերպությանը մասնակցելը (անդամակցելը) և մասնակցությունից (անդամակցությունից) դուրս գալը կամավոր է:

Արհեստակցական կազմակերպության մասնակցելու (անդամակցելու) մասին վարձու աշխատողի դիմումը քննարկում է Արհեստակցական կազմակերպության կոմիտեն՝ արհկոմիտեն, դիմում տալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վարձու աշխատողը համարվում է Արհեստակցական կազմակերպության անդամ՝ արհկոմիտեի կողմից այդ մասին որոշում ընդունելուց հետո:

Արհեստակցական կազմակերպության մասնակցին (անդամին) տրվում է սահմանված կարգի անդամատոմս:

Արհեստակցական կազմակերպությանը մասնակցելու (անդամակցելու) մասին դիմումը մերժվելու դեպքում վարձու աշխատողը կարող է երկրորդ անգամ դիմել երեք ամիս հետո: Դիմումը մերժելու մասին արհկոմիտեի որոշումը պետք է լինի հիմնավորված:

Հոդված 11

Արհեստակցական կազմակերպության մասնակիցը (անդամը) սույն կանոնադրության պահանջները խախտելու դեպքում արհկոմիտեի որոշմամբ կարող է զգուշացվել կամ Արհեստակցական կազմակերպության կազմից հեռացվել:

Հոդված 12

Արհեստակցական կազմակերպության անդամը իրավունք ունի՝

1. ընտրել և ընտրվել արհկոմիտեի և վերստուգիչ հանձնաժողովի կազմերում.
2. արհկոմիտեի քննարկմանը ներկայացնել փաստաթղթերի նախագծեր, առաջարկություններ, ստանալ դրանց վերաբերյալ որոշումներ.
3. դիմել արհկոմիտեին իր աշխատանքային և սոցիալ-տնտեսական շահերի պաշտպանության միջնորդությամբ.
4. մասնակցել կոլեկտիվ պայմանագրի և համաձայնագրի նախագծերի նախապատրաստման և իրականացման աշխատանքներին.
5. մասնակցել արհկոմիտեի գործունեության ծրագրերի մշակմանը.
6. ստանալ արհկոմիտեից տեղեկատվություն Արհեստակցական կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության մասին:

Հոդված 13

Արհեստակցական կազմակերպության անդամը պարտավոր է՝

1. կատարել սույն կանոնադրության պահանջները, արհկոմիտեի որոշումները.
2. սահմանված չափով և ժամկետում մուծել անդամավճարը.
3. Արհեստակցական կազմակերպության մասնակցությունից (անդամակցությունից) դուրս գալու որոշման մասին գրավոր տեղյակ պահել արհկոմիտեին.
4. ցուցաբերել փոխադարձ համերաշխություն Արհեստակցական կազմակերպության մասնակիցների (անդամների) միջև աշխատանքային և սոցիալ-տնտեսական իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված արհկոմիտեի միջոցառումների ժամանակ:

ԳԼՈՒԽ 4

Արհեստակցական կազմակերպության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինները

Հոդված 14

Արհեստակցական կազմակերպության ղեկավար մարմիններն են՝ Արհեստակցական կազմակերպության ժողովը և Արհեստակցական կազմակերպության կոմիտեն (արհկոմիտեն):

Հոդված 15

Արհեստակցական կազմակերպության բարձրագույն ղեկավար մարմինը Արհեստակցական կազմակերպության ժողովն է, որը հրավիրվում է արհկոմիտեի որոշմամբ, ոչ ուշ, քան տարին մեկ անգամ:

Հոդված 16

Արհկոմիտեի նիստերը հրավիրում է արհկոմիտեի նախագահը, ոչ ուշ, քան երկու ամիսը մեկ անգամ:

Հոդված 17

Արհկոմիտեն և վերստուգիչ հանձնաժողովը կազմավորվում են բարձրագույն ղեկավար մարմնի կողմից, հինգ տարի ժամանակով:

Արհկոմիտեի և վերստուգիչ հանձնաժողովի կազմում ընտրված է համարվում Արհեստակցական կազմակերպության այն մասնակիցը (անդամը), ով ստանում է ժողովի մասնակիցների ձայների կեսից ավելին:

Հոդված 18

Արհկոմիտեի որոշումը Արհեստակցական կազմակերպության ժողովի հրավիրման օրակարգի, անցկացման տեղի և ժամկետի մասին ընդունվում է ժողովից մեկ ամիս առաջ:

Բացառիկ դեպքերում հրավիրվում է արտահերթ ժողովներ, որի մասին արհկոմիտեի որոշումը ընդունվում է մեկ շաբաթ առաջ:

Հոդված 19

Արհեստակցական կազմակերպության ժողովը

1. Լսում է հաշվետու ժամանակահատվածում արհկոմիտեի և վերստուգիչ հանձնաժողովի կատարած աշխատանքների մասին հաշվետվությունները, ընդունում է համապատասխան որոշումներ:
2. Հաստատում է Արհեստակցական կազմակերպության կանոնադրությունը, արհկոմիտեի և վերստուգիչ հանձնաժողովի կանոնակարգերը, նրանցում լրացումներն ու փոփոխությունները:
3. Հաստատում է Արհեստակցական կազմակերպության գործունեության ծրագիրը, ընդունում է դիմումներ, հայտարարություններ, որոշումներ:
4. Ընտրում է արհկոմիտեի նախագահ (հինգ տարի ժամանակով), ետ կանչում նրան պաշտոնից:
5. Ընդունում է որոշումներ Արհեստակցական կազմակերպության վերակազմակերպման և լուծարման մասին:

Հոդված 20

Արհեստակցական կազմակերպության ժողովը համարվում է իրավազոր, եթե նրա աշխատանքներին մասնակցում են Արհեստակցական կազմակերպության անդամների կեսից ավելին:

Հոդված 21

Արհեստակցական կազմակերպության ժողովի որոշումները համարվում են ընդունված, եթե որոշումների օգտին քվեարկում են ժողովի մասնակիցների կեսից ավելին:

Քվեարկության կարգը բաց կամ փակ (գաղտնի), որոշում է ժողովը:

Հոդված 22

Արհեստակցական կազմակերպության ժողովների միջև ընկած ժամանակահատվածում Արհեստակցական կազմակերպության աշխատանքները ղեկավարում է արհկոմիտեն, որի թվակազմը որոշում է Արհեստակցական կազմակերպության ժողովը:

Գործատուի ղեկավար անձը իրավունք չունի լինելու արհկոմիտեի անդամ, իսկ գլխավոր հաշվապահը՝ վերստուգիչ հանձնաժողովի անդամ:

Հոդված 23

Արհկոմիտեն՝

1. Հրավիրում է Արհեստակցական կազմակերպության ժողով հաստատում է նրա օրակարգի նախագիծը, անցկաման տեղը և ժամկետը.
2. Իրագործում է Արհեստակցական կազմակերպության ժողովի որոշումները, սույն կանոնադրության պահանջները.
3. Գործատուի հետ կոլեկտիվ պայմանագրի մշակման և կնքման ժամանակ ներկայացնում և պաշտպանում է Արհեստակցական կազմակերպության շահերը.
4. Օրենքով սահմանված կարգով կազմակերպում է խաղաղ, առանց զենքի երթեր, ցույցեր, գործադուլներ, մարզամշակութային և զանգվածային այլ միջոցառումներ:
5. Ընդունում է Արհեստակցական կազմակերպության կազմում նոր մասնակիցների (անդամների), հեռացնում է մասնակիցներին (անդամներին) Արհեստակցական կազմակերպության կազմից.
6. Հաստատում է Արհեստակցական կազմակերպության բյուջեն, քննարկում է ֆինանսական ստուգումների արդյունքները.
7. Ընտրում է արհկոմիտեի նախագահի տեղակալին հինգ տարի ժամանակով, ետ կանչում նրան զբաղեցրած պաշտոնից, կատարում աշխատանքի բաժանում արհկոմիտեի նախագահի, նախագահի տեղակալի և արհկոմիտեի մյուս անդամների միջև.
8. Ներկայացնում է առաջարկներ համապատասխան ճյուղային հանրապետական միության ղեկավար մարմիններում քննարկելու համար.
9. Լսում է արհկոմիտեի նախագահի գործունեության հաշվետվությունները, անհրաժեշտության դեպքում, արհկոմիտեի նախագահի դիմումի համաձայն ետ է կանչում նրան զբաղեցրած պաշտոնից.
10. Համապատասխան մարմինների խրախուսմանն է ներկայացնում Արհեստակցական կազմակերպության առավել աչքի ընկած մասնակիցներին (անդամներին):

Հոդված 24

Արհկոմիտեի նիստը հրավիրվում է հաստատված ժամանակացույցի համաձայն, բայց ոչ ուշ, քան երկու ամիսը մեկ անգամ և իրավազոր է, եթե նրա աշխատանքին մասնակցում է արհկոմիտեի անդամների ոչ պակաս քան երկու երրորդը: Արհկոմիտեի որոշումները համարվում են ընդունված, եթե որոշման օգտին քվեարկում են նիստին մասնակցած արհկոմիտեի անդամների կեսից ավելին: Քվեարկության ձևը (բաց կամ փակ (գաղտնի)) որոշում է արհկոմիտեն:

Հոդված 25

Արհկոմիտեի նախագահը և նախագահի տեղակալը կազմակերպում են Արհեստակցական կազմակերպության ժողովի (համաժողովի), արհկոմիտեի որոշումների կենսագործումը, ղեկավարում են արհկոմիտեի աշխատանքները, ընդունում են Արհեստակցական կազմակերպության մասնակիցների (անդամների) դիմումները, վարձու աշխատողների աշխատանքային շահերի հետ կապված տարբեր հարցերով բանակցում են Գործատուի հետ, հանդես են գալիս վարկի կարգադրիչներ:

Հոդված 26

Արիկոմիտեի որոշմամբ, հաշվի առնելով Արհեստակցական կազմակերպության ֆինանսական հնարավորությունները, սահմանվում է արիկոմիտեի նախագահի, հնարավորության դեպքում նաև արիկոմիտեի հաշվապահի (գանձապահի) վճարովի կամ մասնակի վճարովի հաստիքներ: Վերջիններիս աշխատանքային գրքույկներում համապատասխան գրառումները հաստատվում են Արհեստակցական կազմակերպության կլոր կնիքով:

Հոդված 27

Արիկոմիտեի նախագահի բացակայության դեպքում նախագահի լիազորությունները իրականացնում է արիկոմիտեի նախագահի տեղակալը:

Հոդված 28

Արհեստակցական կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեությունը, բյուջեների կատարումը, ժողովի և արիկոմիտեի որոշումների կատարումը վերահսկելու նպատակով Արհեստակցական կազմակերպության ժողովը Արհեստակցական կազմակերպության անդամներից ընտրում է վերստուգիչ հանձնաժողով, հաստատում նրա աշխատակարգը:

Հոդված 29

Արհեստակցական կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը ընտրում է հանձնաժողովի նախագահ, հաստատում է հանձնաժողովի գործունեության ծրագիրը:

Վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու է Արհեստակցական կազմակերպության ժողովին: Ընթացիկ վերստուգումների արդյունքների մասին վերստուգիչ հանձնաժողովը տեղեկություն է տալիս արիկոմիտեին:

Վերստուգիչ հանձնաժողովի աշխատակարգի պահանջները իրագործելու համար անհրաժեշտ ծախսերը կատարվում են արիկոմիտեի միջոցների հաշվին:

Վերստուգիչ հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի անդամների կեսից ավելիի մասնակցությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ:

ԳԼՈՒԽ 5

Արհեստակցական կազմակերպության սեփականությունը և ֆինանսատնտեսական գործունեությունը

Հոդված 30

Արհեստակցական կազմակերպության սեփականությունը գոյանում է Արհեստակցական կազմակերպության մասնակիցների (անդամների) անդամավճարներից, ֆիզիկական և իրավաբանական անձանց կամավոր ներդրումներից, նվիրատվություններից, Գործատուի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հատկացումներից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

Հոդված 31

Արհեստակցական կազմակերպության սեփականություն կարող են հանդիսանալ շենքեր, առողջարանային, հանգստի, տուրիստական, մարզական, մշակութային հիմնարկներ, ինչպես նաև այլ ունեցվածք, որոնք ապահովում են իրականացնելու Արհեստակցական կազմակերպության կանոնադրական պահանջները:

Հոդված 32

Ժողովի որոշմամբ սահմանվում է Արհեստակցական կազմակերպության մասնակցի (անդամի) ամենամսյա անդամավճար՝ Գործատուի մոտ ստացած եկամուտի ոչ պակաս քան մեկ տոկոսի չափով: Անդամավճարը գանձվում է կանխիկ և (կամ) անկանխիկ ձևով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մուտքավճարի չափը սահմանվում է նվազագույն աշխատավարձի 1 %-ի չափով, մուծման կարգը՝ կանխիկ կամ անկանխիկ:

Հոդված 33

Հանրապետությունում ֆիզկուլտուրայի, սպորտի և տուրիզմի ոլորտում արհմիութենական աշխատանքները համախմբելու և զարգացնելու, Արհեստակցական կազմակերպության աշխատանքային, սոցիալ-տնտեսական շահերը Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում ներկայացնելու և պաշտպանելու, արհկոմիտեին մեթոդական և գործնական օգնություն ցույց տալու համար Արհեստակցական կազմակերպությունը կարող է դառնալ հիմնադիր Արհեստակցական կազմակերպությունների տարածքային և (կամ) ճյուղային հանրապետական միության՝ վերջիններիս կանոնադրություններով սահմանված կարգով, ինչպես նաև մասնակցել (անդամակցել նրանց):

Հոդված 34

Արհեստակցական կազմակերպության սեփականությունը չի բաժանվում մասնակիցներին (անդամներին), այն օգտագործվում է արհկոմիտեի որոշմամբ, Արհեստակցական կազմակերպության կանոնադրության պահանջներին համապատասխան:

Հոդված 35

Արհկոմիտեն տնօրինում, տիրապետում և օգտագործում է Արհեստակցական կազմակերպության սեփականությունը: Արհեստակցական կազմակերպության տարեկան բյուջեի կատարման մասին հաշվետվությունը վերստուգիչ հանձնաժողովի ստուգումների ակտի հետ միասին քննարկվում է արհկոմիտեում և հաստատվում է Արհեստակցական կազմակերպության ժողովում օրացուցային տարվա ավարտից հետո:

Հոդված 36

Արհեստակցական կազմակերպությունը կարող է ունենալ բանկային հաշիվներ, այդ թվում՝ արտարժութային:

Հոդված 37

Արհեստակցական կազմակերպության կազմից Արհեստակցական կազմակերպության մասնակցի (անդամի) դուրս գալու դեպքում նրան չի վերադարձվում նրա կողմից՝ որպես անդամավճար մուծված գումարը:

Հոդված 38

Արհեստակցական կազմակերպության գույքի օտարումը կատարվում է արհկոմիտեի որոշմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 6

Արհեստակցական կազմակերպության կապերը

Հոդված 39

Արհեստակցական կազմակերպությունը, ի դեմս արհկոմիտեի, սույն կանոնադրության պահանջներին համապատասխան կարող է համաձայնագրեր կնքել և համագործակցել տարբեր իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ:

ԳԼՈՒԽ 7

Արհեստակցական կազմակերպության իրավունակությունը

Արհեստակցական կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը

Հոդված 40

Արհեստակցական կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ պետական գրանցմանպահից:

Արհեստակցական կազմակերպությունն ունի իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտավորությունները:

Արհեստակցական կազմակերպությունն ունի հայերեն և ռուսերեն լեզուներով իր անվանումով կնիք, դրոշմ, անվանաթերթիկ, բանկային հաշիվներ:

Հոդված 41

Արհեստակցական կազմակերպության վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձնացումը) իրականացվում է Արհեստակցական կազմակերպության ժողովի որոշմամբ՝ օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով:

Հոդված 42

Արհեստակցական կազմակերպության լուծարումը տեղի է ունենում օրենքով և Արհեստակցական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

Հոդված 43

Լուծարման մասին որոշումն ընդունվում է Արհեստակցական կազմակերպության ժողովում: Լուծարման մասին որոշում ընդունելուց հետո Արհեստակցական կազմակերպության ժողովը ընտրում է լուծարման հանձնաժողով, սահմանում լուծարման կարգը և ժամկետները և օրենքով սահմանված կարգով պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքը օգտագործում է Արհեստակցական կազմակերպության նպատակների իրականացման համար, իսկ եթե դա հնարավոր չէ՝ փոխանցում է պետական բյուջե:

Արհեստակցական կազմակերպությունը համարվում է լուծարված, իսկ նրա գոյությունը դադարած, այդ մասին պետական գրանցամատյանում գրառման պահից: